

Վանաձոր համայնք
 Իրավական և մասնագիտական հսկողության հարցաշար
 Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների նկատմամբ
 Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից իրականացվող

Դրույթների անվանումը	Պահպանված է	Թերի է պահպանված	Պահպանված չէ	Հայտնաբերված խախտումները	Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ	Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները
1. Օրենքով սահմանված կարգով համայնքի զարգացման ծրագիրը համայնքի ավագանուն ներկայացված լինելու առկայություն:	V					
2. Համայնքի ավագանու որոշմամբ հաստատված համայնքի զարգացման քառամյա ծրագրի և (կամ) տարեկան բյուջեի կառավարման (կազմման, հանրային քննարկման, իրականացման (կատարման) և վերահսկման) գործընթացներում համայնքի բնակիչների մասնակցությունն ապահովելու համար աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների համապատասխան մասնագետների ընդգրկմամբ, ինչպես նաև համայնքի ավագանու մեկից մինչև երեք անդամների, բնակիչների, փորձագետների և այլ շահագրգիռ անձանց ներգրավմամբ (վերջիններիս համաձայնությամբ) ստեղծված համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմնի	V					

առկայություն:					
3. Օրենքով սահմանված կարգով՝ համայնքի զարգացման քառամյա ծրագրի և (կամ) տարեկան բյուջեի նախագծերի վերաբերյալ հանրային բաց լսումներ և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման վերաբերյալ աշխատանքների առկայություն:	V				
4. Օրենքով սահմանված կարգով համայնքի բյուջեի նախագծի կազմման, համայնքի ավագանու հաստատման, բյուջեի կատարման, դրանում առաջարկվող փոփոխությունների ինչպես նաև համայնքի ավագանուն եռամսյա հաղորդումներ և տարեկան հաշվետվությունների ներկայացման ուղղությամբ կատարված աշխատանքների առկայություն:	V				
5. ՀՀ կառավարության կողմից ֆինանսական համահարթեցման սկզբունքով համայնքներին տրամադրվող դոտացիաների նախնական թվերի հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում համայնքի բյուջեի նախագիծը առնվազն մեկ շաբաթ առաջ համայնքի ավագանու քննարկմանը ներկայացնելու վերաբերյալ կատարված աշխատանքների առկայություն:	V				
6. Համայնքի բնակչության կենսաապահովման խնդիրները լուծելու նպատակով մատուցվող ծառայությունների՝	V				

<p>ջրամատակարարման, ջրահեռացման, ոռոգման, ջեռուցման, աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպման, բազմաբնակարան շենքերի սպասարկման և այլ ծառայությունների իրականացման համար օրենքով սահմանված կարգով վճարների սահմանման ուղղությամբ կատարված աշխատանքների առկայություն:</p>						
<p>7. ՀՀ պետական բյուջեի հիման վրա ճշտված դրամարկղային գործառնությունների եռամսյակային կամ ամսական պլանների հաստատված լինելու առկայություն:</p>	V					
<p>8. Օրենքով սահմանված կարգով համայնքի ֆինանսական փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրության պահանջներին:</p>		V		<p>Համայնքապետարանի ենթակա ՀՈԱԿ-ների հաշվապահական հաշվառումը չի վարվում համակարգչային ավտոմատացված ծրագրերով, կամ չի պահպանվել «Հանրային հատվածի կազմակերպությունների հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի պահանջը, համաձայն որի՝ կազմակերպությունները պարտավոր են հաշվապահական հաշվառումը վարել հաշվապահական հաշվառման ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում վարելու հնարավորություն ընձեռող համակարգչային ծրագրերով:</p> <p>Գործուղման գումարները վճարվում են ուշացումներով՝ գործուղում</p>	<p>Ձեռք բերել ավտոմատացված համակարգչային ծրագիր և հաշվապահական հաշվառումը վարել նշված համակարգի միջոցով:</p>	<p>Երկամսյա ժամկետում</p>

				<p>մեկնելուց հետո: Համաձայն ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2335-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի գործուղվող աշխատողին գործուղման ծախսերի հատուցումը տրվում է գործուղում մեկնելուց առնվազն մեկ օր առաջ: Իսկ սույն որոշման 21-րդ կետի համաձայն ծառայողական գործուղման մեկնած աշխատողին գործուղում մեկնելուց առաջ օրապահիկը վճարվում է ամբողջությամբ, գիշերավարձը և ճանապարհաճախսը՝ սույն կարգով սահմանված նվազագույն գումարի չափով:</p> <p>Թերի է պահպանվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի հոդված 77-ի կետ 3-ի պահանջը, համաձայն որի սեփականության իրավունքով գույք ձեռք բերելուց կամ գույքն օտարելուց հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, համայնքի ղեկավարը գույքագրման փաստաթղթերում կատարում է համապատասխան փոփոխություններ, որոնք համայնքի ավագանին հաստատում է առաջիկա նիստում:</p> <p>Համայնքապետարանի ենթակա ՀՈԱԿ-ներում նախորդ տարիներին որոշ դեպքերում աշխատավարձերի վճարումները կատարվել են ուշացումներով, կամ չեն պահպանվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 192-րդ հոդվածի 1-ին կետի պահանջը, համաձայն որի «Աշխատավարձը յուրաքանչյուր ամիս հաշվարկվում և աշխատանքային օրերին վճարվում է աշխատողին ամսական առնվազն մեկ անգամ՝ մինչև հաջորդ ամսվա 15-ը»:</p> <p>Չի պահպանվել նաև ՀՀ</p>	<p>Գործուղման գումարները հաշվարկել և վճարել ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2335-Ն որոշմամբ հաստատված կարգով սահմանված ժամկետներում:</p> <p>Սեփականության իրավունքով գույք ձեռք բերելու ժամանակ պահպանվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի հոդված 77-ի կետ 3-ի պահանջը:</p> <p>Բացառել աշխատավարձերի վճարման ուշացումները, պահպանել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 192-րդ և 198-րդ հոդվածների պահանջները:</p>	<p>Հետազայում բացառել</p> <p>Հետազայում բացառել</p> <p>Հետազայում բացառել</p>
--	--	--	--	--	---	---

			<p>աշխատանքային օրենսգրքի 198-րդ հոդվածի 1-ի պահանջը, ըստ որի աշխատավարձերի ուշացման դեպքում «աշխատավարձի վճարման կետանցված յուրաքանչյուր օրվա համար աշխատողին վճարում է տուժանք՝ վճարման ենթակա աշխատավարձի 0,15 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան վճարման ենթակա գումարի չափը»:</p> <p>Քաղաքապետարանի ենթակա կազմակերպություններում առանձին դեպքերում արձակուրդային գումարները վճարվել են ուշացումներով, կամ խախտվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 169-րդ հոդվածի կետ 2-ի պահանջը, համաձայն որի աշխատողին ամենամյա արձակուրդային գումարների վճարումն իրականացվում է ոչ ուշ, քան ամենամյա արձակուրդն սկսելուց երեք օր առաջ:</p> <p>Համայնքի 2015թ. և 2016թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համայնքի ավագանու հաստատելուց հետո չի հրատարակվել http://www.azdarar.am հասցեում, կամ չի պահպանվել «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի գ/ ենթակետի պահանջը, ըստ որի «համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համայնքի ավագանու հաստատելուց հետո հնգօրյա ժամկետում հրապարակվում է տեղական մամուլում և http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական</p>	<p>Արձակուրդային գումարները վճարումները իրականացնել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 169-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված ժամկետներում:</p> <p>Խախտումը 2018թ. վերացվել է ` 2017թ բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը կարգով հրատարակվել է:</p>	<p>Հետազայում բացառել</p>
--	--	--	--	--	---------------------------

				ինտերնետային կայքում» Ապրանքանյութական արժեքների ծախսերը հիմնավորող փաստաթղթերը որոշ դեպքերում լրացվում են թերություններով:	Գնված ապրանքանյութական արժեքների ծախսերը հիմնավորելու համար սահմանված կարգով լրացնել պահանջագրեր, ակտեր և այլ հիմնավորող փաստաթղթեր:	Հետագայում բացառել
9. Օրենքով սահմանված ժամկետում համայնքի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համայնքի ավագանու հաստատմանը ներկայացված լինելու առկայությունը:	V					
10. Տեղական հարկերի, տուրքերի և վճարների՝ օրենքով սահմանված տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու վերաբերյալ որոշման նախագծերը ավագանու հաստատմանը ներկայացնելու առկայություն:	V					
11. Համայնքի ղեկավարի կողմից տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն համարվող հողերի, համայնքի սեփականություն համարվող գույքի օրենքով սահմանված կարգով վարձավճարների գանձման ու վերահսկման ուղղությամբ կատարված աշխատանքների առկայություն:		V		Ձեռնարկվում են որոշ միջոցներ սեփական եկամուտների հավաքագրման ուղղությամբ, սակայն կան հարկատուներ, որոնք խուսափում են վճարումները սահմանված կարգով և ժամկետներում իրականացնելուց, ինչի պատճառով 01.01.2018թ. առկա են խոշոր չափերի հասնող ապառքներ, այդ թվում՝ հողի հարկից՝ 129763.7 հազ. դրամ, որից տույժ՝ 33108.0 հազ. դրամ, գույքահարկից՝ 517916.4 հազ. դրամ, որից տույժ՝ 141621.6 հազ. դրամ, վարձավճարներից՝ 108315.7 հազ. դրամ, որից տույժ՝ 28474.1 հազ. դրամ:	Գանձումները ապահովելու համար տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ գործող իրավական ակտերով սահմանված կարգով կիրառել համապատասխան միջոցներ:	Սահմանել ամենօրյա հսկողություն

			<p>Թերի է պահպանվել «ՏԻՄ» օրենքի հոդված 38-ի 1-ին կետի 3-րդ ենթակետերի պահանջը, համաձայն որի համայնքի ղեկավարը օրենքով սահմանված կարգով կազմակերպում է տեղական հարկերի, տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողերի, համայնքի սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձումն ու վերահսկումը:</p> <p>Հողի հարկի և գույքահարկի ծանուցագրերի ու անդորրագրերի հատկացման, հաշվառման և պահպանման գործընթացի կազմակերպումն իրականացվում է ՀՀ կառավարության 29.05.2003թ.-ի թիվ 750-Ն որոշման հավելված N3-ով հաստատված կարգի 12-րդ կետերի որոշ պահանջներին ոչ համապատասխան, համաձայն որի տեղական ինքնակառավարման մարմիններում վճարումներ համակարգողը՝ յուրաքանչյուր ամսվա արդյունքներով, մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 5-ը վճարումներ ընդունողների հետ կազմում է երկկողմանի տեղեկանք ստացված, օգտագործված (խոտանված) անդորրագրերի մասին, յուրաքանչյուր եռամսյակի արդյունքներով, մինչև տվյալ եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը անդորրագրերի և ծանուցագրերի մուտքագրումը, գրանցումը և հատկացումն իրականացնող պատասխանատու անձի հետ կազմում է երկկողմանի ակտ՝ համայնքում համապատասխան</p>	<p>Հողի հարկի և գույքահարկի գումարների գանձման գործընթացի կազմակերպումն իրականացնել ՀՀ կառավարության 29.05.2003թ.-ի թիվ 750-Ն որոշմամբ սահմանված կարգի պահանջներին համապատասխան:</p>	<p>Հետագայում բացառել</p>
--	--	--	---	--	---------------------------

				<p>ժամանակաշրջաններում ծանուցագրերի և անդորրագրերի քանակային շարժի (ստացված, օգտագործված, խոտանված, մնացորդ) մասին:</p> <p>Հողի հարկի և գույքահարկի գանձումները 2018թ.-ից կատարվում են կանխիկի ընդունման տեմինալի միջոցով, որի ժամանակ գանձվում է միջնորդավճար, ինչը որոշ քաղաքացիների մոտ առաջացնում է դժգոհություններ: Համաձայն ՀՀ կառավարության 29.05.2003թ.-ի թիվ 750-Ն որոշման հողի հարկի և գույքահարկի գանձումները կատարվում են համապատասխան անդորրագրերով, իսկ տերմինալը պետքի է լինի այլընտրանքային տարբերակ՝ քաղաքացու ցանկությամբ:</p>		
<p>12. Տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով համապատասխան միջոցների կիրառման առկայություն:</p>		V		<p>Հարկեր չվճարողների հետ տարվում են բացատրական աշխատանքներ, սակայն ոչ բոլոր դեպքերում է այն արդյունավետ: Մի շարք խոշոր պարտք ունեցողների գործեր ուղարկվել են դատարան՝ գումարները բռնագանձելու վերաբերյալ: Դեռևս կան տեղական տուրքերից խուսափողներ, որոշ դեպքերում տեղական տուրքերը գանձվում են ուշացումներով, կամ չի պահպանվում «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 6-րդ կետի պահանջը, համաձայն որի տեղական տուրք և (կամ) վճար վճարողները պարտավոր են՝ սահմանված ժամկետում և կարգով լրիվ վճարել սույն օրենքով սահմանված տեղական տուրքերը և (կամ) վճարները: Որոշ տնտեսվարող</p>	<p>Տեղական տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ գործող իրավական ակտերով սահմանված կարգով կիրառել համապատասխան միջոցներ:</p>	<p>Սահմանել ամենօրյա հսկողություն</p>

				<p>սուբյեկտները համապատասխան չունենալով վաճառքի թույլտվություն վարել և վարում են անօրինական գործունեություն: Այսպես՝ համայնքում 2018թ. դեկտեմբերին վառելանյութի վաճառքով զբաղվող երեք տնտեսվարող սուբյեկտ դեռևս ամբողջությամբ չեն մուծել տեղական տուրքի գումարները, որը սահմանված է տարեկան 200.0 հազ. դրամ, Համայնքում ցածր է տաքսի ծառայություններից գանձվող տուրքի ցուցանիշները և այն ունի նվազման միտում: Եթե 2016թ. գանձվել է 2377.5 հազ. դրամ, ապա 2017թ. այն կազմել է 1805.0 հազ. դրամ, իսկ 2018թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ այն կազմում է 1141.0 հազ. դրամ: Քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվություն չունեն երկու տնտեսվարող կազմակերպություններ, տուրքի չափ սահմանված է 500.0 հազ. դրամ: Ըստ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի» 169.16 հոդվածի առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում առանց համապատասխան թույլտվության գործունեություն իրականացնելը համար սահմանված է տուգանքներ: Օրինակ՝ առանց թույլտվության քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացումը և (կամ) մատուցումն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն</p>		
--	--	--	--	---	--	--

				<p>աշխատավարձի հազարապատիկի չափով, առանց թույլտվության հեղուկ վառելիքի վաճառք իրականացնելն առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև հարյուրապատիկի չափով: Թերի է պահպանվել «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի հոդված 38-ի 1-ին կետի 4-րդ ենթակետերի պահանջը, համաձայն որի համայնքի ղեկավարը տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառում է համապատասխան միջոցներ (տեղական տուրքերի մասով 2016-2017թթ. վերաբերյալ տեղեկատվություն չի ներկայացվել):</p>		
<p>13. Համայնքի կողմից իրականացվող ծառայությունների դիմաց կատարվող վճարների դրույքաչափերի վերաբերյալ օրենքով սահմանված կարգով ավագանու հաստատմանը ներկայացված որոշման առկայություն:</p>	V					
<p>14. Համայնքի բյուջեի միջոցների տնօրինման և նպատակային օգտագործման համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը:</p>	V					
<p>15. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից տրված մեթոդական ցուցումների համաձայն համայնքի բյուջեի եկամտային մասի կազմման</p>	V			<p>Բյուջեով նախատեսված հողի հարկի և գույքարակի գումարները հիմնականում պակաս են մեկ տարվա հաշվարկային թվերից: Այսպես՝ 2017թ. հողի հարկի հաշվարկը կազմում է 41057.5 հազ. դրամ, սակայն բյուջեով նախատեսված</p>	<p>Բյուջեի կազմման ժամանակ նախատեսել եկամուտների մեկ տարվա հաշվարկ և որոշակի գումաներ</p>	<p>Հետագայում բացառել</p>

<p>գործընթացում՝ տարեկան հաշվարկային ցուցանիշների ընդունման ժամանակ ապառքներից (հողի հարկի և գույքահարկի մասով) գումարների ներառում:</p>				<p>է 32800.0 հազ. դրամ՝ կամ պակաս է 8257.5 հազ. դրամ: 2017թ. գույքահարկի մեկ տարվա հաշվարկը կազմում է 397167.4 հազ. դրամ, բյուջեով նախատեսված է գույքահարկ՝ 329210.0 հազ. դրամ, կամ պակաս է 67957.4 հազ. դրամ: Այսպիսով՝ եթե բյուջեով նախատեսված թիվը փոքր է մեկ տարվա հաշվարկից, ապա նշանակում է, որ բյուջեում գումարներ չեն նախատեսված նաև ապառքներից, այն դեպքում, երբ 01.01.2018թ. դրությամբ ապառքը տույժերով կազմում է հողի հարկից՝ 129763.7 հազ. դրամ, գույքահարկից՝ 517916.4 հազ. դրամ:</p>	<p>նաև ապառքներից:</p>	
<p>16. Համայնքի բյուջեի կազմման գործընթացում տարեկան հաշվարկային ցուցանիշների իրատեսական բաշխման առկայություն՝ ըստ ամիսների:</p>	<p>V</p>					
<p>17. Բյուջեի ծախսային մասի կազմման գործընթացում՝ աշխատավարձի ֆոնդի տարեկան հաշվարկային ցուցանիշների ընդունման ժամանակ ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից ներկայացրած առաջարկությունների ընդունում:</p>	<p>V</p>					
<p>18. «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ դոտացիաների տրամադրման համար ներկայացվող ելակետային տվյալների համապատասխանության ապահովում համայնքների տարեկան հաշվարկային ցուցանիշներին (բազային</p>	<p>V</p>					

<p>թվերին) համապատասխան:</p> <p>19. Համայնքի բյուջեի եկամտային մասի կատարման գործընթացում եկամուտների հավաքագրման ցածր ցուցանիշների ապահովման դեպքում՝ պատճառների բացահայտում և ձեռնարկված միջոցների իրականացում:</p>	V					
<p>20. «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշման պահանջների պահպանում:</p>		V		<p>Գնումների գործընթացի ընտրանքային ստուգմամբ պարզվեց, որ կազմակերպված գնման ընթացակարգերի գերակշռող մասի գնումների պաշտոնական կայքում հրապարակման ենթակա տեղեկատվությունը բացակայում է, մասնավորապես՝ կայքում տեղադրված չեն ընտրված մասնակցի իրական շահառուների մասին տվյալները, հայտերի գնահատման նիստի արձանագրությունը, պայմանագիր կնքելու որոշման մասին և կնքված պայմանագրի մասին հայտարարությունները, որով համապատասխանաբար խախտվել են ՀՀ կառավարության 04.05.17թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 32-րդ մասի 1-ին կետի թ/ ենթակետով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 9-րդ կետով, 10-րդ հոդվածի 1-ին կետով, 11-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված դրույթները: Գնման ընթացակարգերի վերաբերյալ կազմված շատ փաստաթղթերում առկա են անճշտություններ և թերություններ:</p>	<p>Գնումների գործընթացի կազմակերպման ժամանակ պահպանել «Գնումների մասին» ՀՀ օրենքի ՀՀ կառավարության 04.05.17թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի պահանջները:</p>	<p><ետագայում բացառել</p>